

Սիրելի ընտանիք, սիրելի մկրտվող՝

Սուրբ Եկեղեցին ողջունում է եւ Օրհնում է Ձեր որոշումը մկրտության վերաբերյալ, հույս ունենալով, որ սուրբ Խորհուրդը ոչ միայն ընտանեկան ավանդություն կամ սովորություն է Ձեր կյանքում, այլեւ հավատքի արտահայտություն:

Մկրտության արարողությունը պարզ ծիսակատարություն չէ այն Ընդհանրական եկեղեցւոյ յոթ Խորհուրդներից է, եւ առաջին պայմանն է Քրիստոնյա լինելու: Եւ քանի որ քրիստոնեական սուրբ կրոնը հիմնված է հավատքի վրա, ուստի խորհուրդները պետք է ըմբռնենք հավատքով եւ երկյուղածությամբ: Հետեւաբար, առանց հավատքի եւ առանց երկյուղածության անհնար է ընդունել Մկրտության Սուրբ խորհուրդը:

Արարողության ընթացքին կատարվում է երեք խորհուրդ՝ Մկրտություն, Դրոշմ եւ Հաղորդություն: Մենք հավատում ենք, որ Մկրտության պահին երբ Երախային (այդպես են կոչում բոլոր չմկրտվածներին) լվանում ենք ջրով՝ այն մաքրվում է առաջին մեղքից, որը անվանում ենք Ադամական: Երբ Մկրտվողին Դրոշում ենք (Կնքում ենք) Սուրբ Մյուռոնով՝ տեղի է ունենում Սուրբ Հոգւոյ Էջօքը, եւ մկրտվողը լցվում է սուրբ շնորհներով: Սուրբ Հաղորդությամբ մկրտվողը միանում է Հիսուս Քրիստոսի Սուրբ Մարմնին եւ Արյանը: Այս խորհուրդների միջոցով է, որ մկրտվողը վերածնվում է հոգեւոր ծնունդով դառնալով Քրիստոսի Եկեղեցու անդամ՝ այսինքն Քրիստոնյա, եղբայրանալով բոլոր մկրտվածներին, որպէս սուրբ Ավագանից ծնվածների:

Հայաստանյայց Եկեղեցում Մկրտության խորհուրդը կատարվում է Հոգեւորականի (քահանայի աստիճան ունեցող) ձեռամբ եւ անհրաժեշտ պայմաններից է Հավատքը, ջուրը, սուրբ Մյուռոնը եւ Կնքահոր ներկայությունը:

Կնքահայրը, մկրտվողի հոգեւոր հայրն է, եւ նրա պարտականությունն է ուսուցանելու եւ դաստիարակելու մանկանը քրիստոնեական հոգով, ուղեկցելով նրան կյանքի ճանապարհին: Անհրաժեշտ է, որ կնքահայրը լինի մկրտված, չափահաս, բանիմաց եւ հավատացյալ անձ: Կնքահոր ամուսնացած լինելը պարտադիր չէ, բայց ցանկալի է: Եղբայրը՝ եղբորը կամ քրոջը Կնքահայր լինել չի կարող, նկատի ունենալով Հոգեւոր հայր լինելու իր հանգամանքը: Պայման է, որ Կնքահայրը լինի հայաստանյայց, բացառության դեպքում ավանդական քրիստոնեական եկեղեցու անդամ: Ոչ Քրիստոնյան, Կնքահայր լինել չի կարող: «Կնքամայր» հասկացողությունը ընդունված չէ Հայ Առաքելական Եկեղեցում, քանի «կնքամայրը» մեր ավանդության մեջ ինքնին Եկեղեցին է, ուր մանուկը վերածնվում է որդեգրվելու համար երկնավոր Հորը:

Չափահասի մկրտության պարագային անհրաժեշտ է Երախայի Քրիստոնեական դաստիարակությունը (պատրաստությունը հոգեւոր հովվի կողմից), իսկ մկրտության օրը պարտադիր է ծոմբերան(սոված) լինելը, հաղորդությունը ստանալու համար: Մանուկների դեպքում հաղորդությունը տրվում է -շրթնահաղորդությամբ:

Մկրտության խորհուրդը կատարվում է մարդու կյանքում մեկ անգամ, ուստի կրկնամկրտությունը անընդունելի է, եւ մեծ մեղք է:

Անհրաժեշտ է, որ հայ ծնողները, հարգելով Հայ Եկեղեցու քրիստոնեական հնավանդ սովորությունները մկրտեն իրենց զավակներին սկսյալ ութ օրականից կամ գոնե քարասունքի մեջ: Փոքրիկներին ամիսներով եւ նույնիսկ տարիներով չմկրտված թողնելն ներելի չէ, եւ այն ծնողները ովքեր առանց լուրջ պատճառի անհոգ եւ անտարբեր են մնում իրենց զաւակների մկրտությանը, ծանրապես պատասխանատու են Աստուծոյ, նաեւ հոգեւորապէս անխնամ թողնված իրենց զավակների առջեւ:

Ձեր Հոգեւոր Հովիվը

Որպէս հավելում՝

Նախընտրելի է, որ Ձեր զավակին շնորհեք Հայկական անուն, առավել եւս եթէ այն պատկանում է Հայ եկեղեցու սուրբերից մեկին, որպէսզի երեխան մշտապէս վայելի երկնային օրհնությունը:

Ձեր շրջանի եկեղեցում մկրտության ժամադրությունը ստանալիս խնդրում ենք ներկայացնել ընտանեկան գրքույքը (կամ ծնողների ամուսնության եւ երեխայի ծննդյան վկայականները): Հնարավորության դեպքում խնդրում ենք ներկայացնել ծնողների եւ կնքահոր մկրտության վկայականը նույնպէս:

Մկրտության խորհուրդին անհրաժեշտ է՝ ճերմակ (մաքրության խորհուրդ) մեծ սրբիչ, երկու մոմ (խորհրդակցաբար լուսավորելու մկրտությունը) եւ խաչ, որը օրհնվում է հոգեւորականի կողմից, դառնալով նշան քրիստոնյա լինելու: